

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2018թ.

N-----Ա

### ՈՐՈՇՈՒՄ

#### ՄԱՐՏԻ 1-Ի ԶՈՂԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ալեքսանդր Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բելյուսի, Մովսես Խորենացու և Գրիգոր Լուսավորչի փողոցների սահմաններով պարփակված այգում հուշարձան տեղադրելու մասին:

**Նախագծի հեղինակներ՝**

Երևան քաղաքի ավագանու  
«Երկիր Ծիրանի» խմբակցության  
անդամներ

**Զարուհի Փոստանջյան**

**Մարինա Խաչատրյան**

**Սոննա Աղեկյան**

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՐՏԻ 1-Ի ԶՈՂԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

## Մարդասիրական հիմնավորում

Հայ ազգն իր հազարամյակների պատմության մեջ ունենալով վերելքներ և անկումներ, հասնելով 21-րդ դար, վերջին ավելի քան մեկ դարում կրել է առավել ծանր զրկանքներ ու զոհողություններ, որոնք տեղի են ունեցել բնակալական համակարգերի մարդատյաց քաղաքականության հետևանքով՝ Օսմանյան կայսրություն (ցեղասպանություն), Խորհրային Միություն (ստալինյան բռնաճնշումներ և քաղաքական հետապնդումներ), նորանկախ Հայաստանի Հանրապետություն (քաղաքական սպանություններ և հետապնդումներ, ժողովրդի արդար ցասումը լռեցնելու համար բոլոր տեսակի բռնությունների կիրառում):

Հայ ազգն իր ապրած ողբերգության՝ օտար համակարգերի իրագործած ոճրագործությունը չի մոռացել և իր դիրքորոշումը հայտնել է դատապարտող հուշարձանների միջոցով և՛ Երևանում տեղադրելով Հայոց ցեղասպանության զոհերի և Բռնադատվածների հուշահամալիրներ: Թեպետ նրան, որ նորանկախ Հայաստանի բնակալական համակարգը, ըստ էության, կրկնում է օտար նախորդների գործողությունները և այն դեռ տապալված չէ՝ որպես բնակալության դեմ ընդվզում և անպատժելիության վերացման քաղաքակրթության դրսևորում պետք է Երևանում կանգնեցնենք հուշարձան, որը կներառի նորանկախ Հայաստանի բնակալական համակարգի ամենաարյունոտ դրսևորման օրը և զոհերին:

### **Քաղաքական հիմնավորում**

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում այդպես էլ տեղի չունեցավ ընտրությունների միջոցով ժողովրդի իշխանության ձևավորում: Այնուամենայնիվ, նորանկախ Հայաստանի քառորդդարյա պատմությունը փաստեց, որ ժողովրդի քվեով չընտրվեցին ո՛չ խորհրդարան, ո՛չ նախագահ և ո՛չ էլ ընդունվեց Սահմանադրություն: Հայ ազգը նորանկախ Հայաստանի բռնակալությունից առաջին սարսափելի հարվածը ստացավ **1995-1996** թվականներին, երբ կեղծվեցին ՀՀ Սահմանադրության ընդունման հանրաքվեն, խորհրդարանական և նախագահական ընտրությունների արդյունքները և հայտարարվեց քաղաքական իշխանության ձևավորման համար այլևս կիրառվելիք հետևյալ բանաձևը՝ *«Եթե ընդդիմությունը նույնիսկ հավաքի 100 տոկոսանոց ձայն, նրան իշխանություն չի տրվելու»:*

Առաջին անգամ **1996** թվականին ազգային զինված ուժերը բերվեցին Երևանի կենտրոնական փողոցներ, որոնց միջոցով ճնշվեց ժողովրդի արդար ցասումը: Իսկ արդեն երկրորդ անգամ՝ **2008** թվականին, ազգային զինված ուժերը ոչ միայն գտնվում էին Երևանի կենտրոնական փողոցներում և ճնշեցին ժողովրդի արդար ցասումը, այլ նաև այդ ընթացքում ուղիղ նշանառությամբ թիրախավորեցին, վիրավորեցին և սպանեցին մարդկանց: Քառորդդարյա վաղեմություն ունեցող բռնակալական համակարգը ո՛չ քաղաքական, ո՛չ իրավական գնահատական չի ստացել: Բռնակալական համակարգի ցայտուն և ցինիկ դրսևորումը՝ **2008** թվականի մարտի 1-ը, որը հայ ազգից իսկ **10**-ը անմեղ կյանք, վիրավորվեցին և հանիրավի ազատագրվեցին հարյուրավորները, կարիք ունի համապարփակ դատապարտման՝ որպես անպատժելիության դեմ առաջադեմ քաղաքակրթության պատասխան:

### **Իրավական հիմնավորում**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **12**-րդ հոդվածի **1**-ին մասի **23**-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության **2005** թվականի դեկտեմբերի **29**-ի **հ.2387**-Ն որոշմամբ հաստատված կարգի **4**-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» **N 551** որոշմամբ հաստատված կարգի **2**-րդ կետի

պահանջները՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Հուշարձանի նախագծային ու շինարարական աշխատանքների ֆինանսավորումն առաջարկվում է իրականացնել հանրության միջոցների հաշվին՝ դրամահավաք անցկացնելու միջոցով:

Հուշարձանի կառուցման համար նախատեսվում է անցկացնել բաց մրցույթ՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված ընթացակարգով:

### **Նախագծի հեղինակներ՝**

Երևան քաղաքի ավագանու  
«Երկիր Ծիրանի» խմբակցության  
անդամներ՝

**Զարուհի Փոստանջյան**

**Մարինա Խաչատրյան**

**Սոնա Աղեկյան**

# ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԱՐՏԻ 1-Ի ԶՈՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ  
ՄԱՍԻՆ»

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մարտի 1-ի գոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրման մասին»  
որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/  
կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

**Նախագծի հեղինակներ՝**

Երևան քաղաքի ավագանու  
«Երկիր Ծիրանի» խմբակցության  
անդամներ՝

**Զարուհի Փոստանջյան**

**Մարինա Խաչատրյան**

**Սոննա Ադեկյան**

# ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՄԱՐՏԻ 1-Ի ԶՈՂԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Մարտի 1-ի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

**Նախագծի հեղինակներ՝**

Երևան քաղաքի ավագանու  
«Երկիր Ծիրանի» խմբակցության  
անդամներ

**Զարուհի Փոստանջյան**

**Մարինա Խաչատրյան**

**Սոննա Աղեկյան**